ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 11.12.2019թ.

Ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա. Նազարյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյանը,

Գնումները համակարգող՝ ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

Բացակայում էր ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա.Սահակյան)

1.1 **09.12.2019**թ.-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն՝ սույն ընթացակարգի առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցները հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չեն ունեցել, ինչպես նաև «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի հրավերով՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններն առկա են և բավարարում են հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին:

1.2 Սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը սույն ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ներկայացրել են սահմանված ժամկետում (առկա են) և դրանք համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքերի.

«Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

ա) Չեն ներկայացվել հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով պահանջվող՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

բ) Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 3.1) (2-րդ չափաբաժնի մասով) առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է՝ պարունակությունը՝ բարձր խտության սպունգ, կոկոսի և արմավենու կամ համարժեք մանրաթել:

Անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի վերոնշյալ բնութագրերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ բացառելով «կամ համարժեք» բառերը:

գ) Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 3.1) (2-րդ չափաբաժնի մասով)՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չէ հրավերով պահանջվող երաշխիքային ժամկետի վերաբերյալ տեղեկատվությունը.

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

Չեն ներկայացվել հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով պահանջվող՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

«Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

ա) Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 3.1) (3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով) առաջարկվող ապրանքների չափաբաժիններ համարները և անվանումները սխալ են նշված:

բ) Հրավերի 4-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի՝ «ԻՖԱ պլանշետային կարդացող միավոր-բաց համակարգ, կիսաավտոմատ, առնվազն մեկ պլանշետային» բաղադրամասի տեխնիկական բնութագրում նշված է՝

Պլանշետների տեսակները՝ 96 փոսիկներով հարթ կամ U, կամ V ձև հատակով:

Սարքի արտաքին չափերը չպետք է գերազանցեն՝ 52,5(L)x26(B)x42(H) սմ, մինչդեռ հրավերով պահանջվում է հետևյալը՝ Սարքի արտաքին չափերը չպետք է գերազանցեն՝ 50(L)x20(B)x45(H)սմ:

Անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող պլանշետների տեսակների և սարքի արտաքին չափերի վերաբերյալ տեղեկատվությունը:

գ) Հրավերի 4-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի՝ «Պլանշետների լվացման միավոր» բաղադրամասի տեխնիկական բնութագրում նշված է.

Լվացման համար երկու բուֆեր առնվազն 2,5լ տարողությամբ 4 կոնտեյներ օգտագործվող հեղուկների համար, մինչդեռ հրավերով պահանջվում է՝ լվացման համար առնվազն երկու բուֆեր առնվազն 3,5լ տարողությամբ 4 կոնտեյներ օգտագործվող հեղուկների համար:

Ղեկավարումը ՀԲ մոնոբլոկում 3.5" էկրանի և 23 կոճականի ստեղնաշարի միջոցով, մինչդեռ հրավերով պահանջվում է՝ Ղեկավարումը հպումային ՀԲ մոնոբլոկում էկրանի միջոցով:

Սարքի արտաքին չափերը չպետք է գերազանցեն՝ 44,6(L)x16,4(B)x36,8(H) սմ, մինչդեռ հրավերով պահանջվում է հետևյալը՝ Սարքի արտաքին չափերը չպետք է գերազանցեն՝ 42(L)x25(B)x42(H) սմ:

Անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող բուֆերների տարողության և սարքի արտաքին չափերի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև անհրաժեշտ է շտկել ՀԲ մոնոբլոկում էկրանի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը **23.12.2019**թ.-ին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց վերոնշյալ մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

27.12.2019թ.-ին գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ սահմանված ժամկետում վերոնշյալ մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

1.3 Հայտերի գնահատման նիստի ավարտի օրը՝ **27.12.2019թ.**-ին, հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը սույն ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ **«Բարրի Թրեյդ» ՍՊԸ**-ի, **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ**-ի, **«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ**-ի և **«Վիոլա» ՍՊԸ**-ի տվյալները գնահատեց բավարար «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին և վերջիններիս հայտարարեց ընտրված մասնակիցներ՝ ըստ համապատասխան չափաբաժինների:

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

1.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման նիստի արդյունքները:

1.6 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Նազարյան

Գնահատող Վ. Վահանյան

Գնահատող Հ. Ավետիսյան

Գնումները համակարգող Ա. Սահակյան